ԱՆՁՆԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԵՎ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԽՄԲՈՒՄ ԴՐԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Ա.Ն. Բեգոյան

«Հիլֆման» հոգեբանական ծառայություն, Երևան, Հայաստան

Հոդվածում ներկայացված է խմբում միջանձնային հարաբերությունների արդյունավետության հարցում անձնային, ինտելեկտուալ և կոնցեպտուալ համատեղելիությունների դերի համեմատական վերլուծությունը՝ անցկացված հետազոտության արդյունքների հիման վրա: Հետազոտության շրջանակներում որպես միջանձնային հարաբերությունների արդյունավետության ցուցանիշ դիտարկվում է ընդհանուր բավարարվածության մակարդակը, որն իր մեջ ներառում է հետազոտվողի բավարարվածությունը համատեղ/խմբային աշխատանքի ընթացքից, արդյունքից և ներխմբային հարաբերություններից: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ խմբի անդամների կոնցեպտուալ համատեղելիության մակարդակի և համատեղ գործունեությունից խմբի անդամների բավարարվածության մակարդակի միջև գոյություն ունի դրական կապ/կորելյացիա:

Հանգուցային բառեր.
միջանձնային հարաբերություններ, բավարարվածության մակարդակ, ընդհանուր կոնցեպտուալ տարածություն, կոնցեպտուալ համատեղելիություն

Ключевые слова:
межличностные отношения, уровень удовлетворенности, общее концептуальное пространство, концептуальная совместимость

Keywords:
interpersonal relationships, satisfaction level, common conceptual space, conceptual compatibility

ЛИЧНОСТНАЯ, ИНТЕЛЛЕКТУАЛЬНАЯ И КОНЦЕПТУАЛЬНАЯ СОВМЕСТИМОСТИ: ИХ СРАВНИТЕЛЬНАЯ ЭФФЕКТИВНОСТЬ И ВЛИЯНИЕ НА МЕЖЛИЧНОСТНЫЕ ОТНОШЕНИЯ В ГРУППЕ

А.Н. Бегоян

«Хильфманн» психологическая служба, Ереван, Армения

В статье дан сравнительный анализ роли личностной, интеллектуальной и концептуальной совместимостей в межличностных отношениях в группе на основе полученных в ходе исследования данных. В рамках исследования в качестве показателя эффективности межличностных отношений рассматривается уровень общей удовлетворенности, который включает в себя удовлетворенность исследуемого от процесса и результатов совместной/групповой работы, а также от межличностных отношений в группе. Результаты исследования дают основание полагать, что существует позитивная корреляция/связь между уровнем концептуальной совместимости членов группы и уровнем удовлетворенности совместной деятельностью. В исследовании приняли участие 86 человек.

PERSONAL, INTELLECTUAL AND CONCEPTUAL COMPATIBILITIES: COMPARATIVE EFFECTIVNESS AND IMPACT ON INTERPERSONAL RELATIONSHIPS WITHIN THE GROUP

A.N. Begoyan

«Hilfmann» Psychological Services, Yerevan, Armenia

Comparative analysis of the role of personal, intellectual and conceptual compatibilities in interpersonal relationships within the group is presented in the article. The Analysis is based on the original research results. In the Research framework the general satisfaction level is considered as an index of interpersonal relationship effectiveness, which includes the satisfaction from the teamwork process and results, as well as, from interpersonal relationships within the group. The results of the ivestigation have shown that there is a positive correlation between team member conceptual compatibility and teamwork satisfaction level.

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Արման Նորայրի ԲԵԳՈՅԱՆ	«Hilfmann School of Professional Psychology», Կլինիկական հոգեբանության և հոգեթերապիայի դեպարտամենտ, ղեկավար «Հիլֆման» հոգեբանական ծառայություն, գլխավոր մասնագետ Հասցե. Երևան 0099, 31-70 Շինարարների փող. Հեռ. +374 (55) 55 09 11 E-mail: arman.begoyan@gmail.com

Ներածություն

Սույն հետազոտության շրջանակներում որպես միջանձնային հարաբերությունների արդյունավետության ցուցանիշ դիտարկվում է ընդհանուր բավարարվածության մակարդակը, որը ներառում է իր մեջ հետազոտվողի բավարարվածությունը համատեղ/խմբային աշխատանքի ընթացքից, արդյունքից և ներխմբային հարաբերություններից: Վերջինիս մակարդակի (ընդհանուր բավարարվածության) վրա էլ իր հերթին ազդում է միջանձնային հարաբերությունների սուբյեկտների ընդհանուր կոնցեպտուալ տարածության առկայությունը, որն էլ բնութագրվում է կոնցեպտուալ համատեղելիության մակարդակով [1]: Այսինքն, եթե միջանձնային հարաբերություններում ներգրավված սուբյեկտների մոտ գրանցվում է կոնցեպտուալ համատեղելիության համեմատաբար բարձր մակարդակ, ապա կարելի է ասել, որ վերջիններս կիսում են կամ ունեն ընդհանուր կոնցեպտուալ տարածություն:

Հետազոտության հիմնական հիպոթեզն այն է, որ այն խմբերում, որոնց հիմքում ընկած է անդամների կոնցեպտուալ համատեղելիությունը, դիտարկվում է միջանձնային հարաբերություններից (համատեղ խմբային աշխատանքից) բավարարվածության առավել բարձր մակարդակ, քան այն խմբերում, որոնց հիմքում ընկած է անձնային և/կամ ինտելեկտուալ համատեղելիությունը: Նման հիպոթեզ առաջադրելու փորձարարական հիմքն է 2011թ. մեր կողմից անցկացված հետազոտություններից մեկը, որի արդյունքում պարզվել էր, որ կոնցեպտուալ համատեղելիության հիման վրա ստեղծված խմբերն առավել արդյունավետ են, քան անձնային և/կամ ինտելեկտուալ համատեղելիության սկզբունքով կազմված խմբերը [2]: Պարզապես նշված հետազոտությունը տարբերվում էր սույն ուսումնասիրությունից իր հետազոտական գործիքակազմով և հետազոտության օբյեկտով, ինչպես նաև հետազոտական խմբերի կազմման ընթացակարգով (խմբերը կազմվել են հետազոտողի կողմից նախնական գնահատումից հետո, իսկ սույն հետազոտության ժամանակ խմբերը կազմվել են մասնակիցների կողմից):

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել խառնվածքային, ինտելեկտուալ և կոնցեպտուալ համատեղելիությունների հարաբերական արդյունավետությունը և ազդեցությունը միջանձնային հարաբերությունների վրա: Նպատակն իրականացնելու համար առանձնացվել և իրագործվել են հետևյալ խնդիրները.

ա) անց է կացվել իմաստային տարբերակիչի (Semantic Differential) դիֆերենցիալի հեղինակային վերափոխված տարբերակը (ԻՏՎՏ), Այզենկի անձնային հարցարանը և Ռավենի պրոգրեսիվ մատրիցաները,

ինչպես նաև հետազոտության վերջին փուլում մասնակիցների կողմից լրացվել է երեք կետանոց բավարարվածության սուբյեկտիվ գնահատման հարցաթերթիկը,

բ) վերլուծվել և համադրվել են նշված մեթոդներով ստացված տվյալները:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտվողների խումբը բաղկացած է եղել «Հյուսիսային համալսարանի» մանկավարժության և հոգեբանության, իրավաբանության և տնտեսագիտության ֆակուլտետների բակալավրիատի 18-20 տարեկան 86 ուսանողներից: Հետազոտությունն իրականացվել է 2011-2012թթ. ուս. տարվա երկրորդ կիսամյակում:

Հետազոտվողներին առաջարկվել է ինքնուրույն բաժանվել 12-16 հոգուց բաղկացած ենթախմբերի. արդյունքում կազմվել է 6 ենթախումբ (աղյուսակ 1):

Այնուհետև հանձնարարվել է նշել 3-6 հատկանիշ, որոնք նոր կազմված ենթախմբի ամեն մի անդամ հաշվի է առել այդ իսկ խումբը կազմելիս, խմբի մյուս անդամներին ընտրելիս, այսինքն՝ նշել այն հատկանիշները, որոնք նա առավել շատ է գնահատում իր խմբի անդամների մեջ: Այնուհետև ընտրվել են հատկանիշներից չորս առավել հաճախ կրկնվողները/հանդիպողները. դրանք են՝ «պատասխանատվություն», «ընկերասիրություն», «բարություն» և «համեստություն»:

Թեստերն անցկացնելուց հետո բոլոր խմբերին հանձնարարվել է ինքնուրույն խմբային (ստեղծագործական) աշխատանք, որի իրականացման համար հատկացվել է երկու շաբաթ ժամանակահատված: Հանձնարարված աշխատանքն ավարտելուց հետո հետազոտության մասնակիցները լրացրել են բավարարվածության սուբյեկտիվ գնահատման հարցաթերթիկը (ԲՍԳՀ):

Հետազոտության ընթացքում կիրառվել են Օսգուդի իմաստային տարբերակիչի հեղինակային վերափոխված տարբերակը (ԻՏՎՏ, տես Հավելվածը), Ռավենի պրոգրեսիվ մատրիցաները (Raven's Progressive Matrics – RPM), Այզենկի անձնային հարցարանը (Eysenck Personality Questionnaire – EPQ) և երեք կետանոց բավարարվածության սուբյեկտիվ գնահատման հարցաթերթիկը (ԲՍԳՀ) [4-6]:

ԻՏՎՏ միջոցով գնահատման են ներկայացվել «պատասխանատվություն», «ընկերասիրություն», «բարություն» և «համեստություն» կոնցեպտները: Գնահատվել են կոնցեպտները երեք գործոններին վերաբերող 18 զույգ բևեռային հատկանիշներով (աղյուսակ 2):

Գնահատումը կատարվել է 7 բալանոց համակարգով՝ +3, +2, +1, 0, -1, -2, -3:

Աղյուսակ 1
Ենթախմբերի կազմը

Ենթախումբը	Անդամների քանակը		
	Ընդհանուր քանակը (n)	Արական սեռի n (%)	Իգական սեռի n (%)
A	16	7 (43,75)	9 (56,25)
B	14	7 (50,0)	7 (50,0)
C	14	6 (42,85)	8 (57,15)
D	15	8 (53,33)	7 (46,64)
E	15	6 (40,0)	9 (60,0)
F	12	5 (41,67)	7 (58,33)

Աղյուսակ 2
Բևեռային հատկանիշների պատկանելիությունը այս կամ այն գործոնին

	Գործոն	Գործոնին վերաբերվող բևեռային հատկանիշների զույգերը
1.	**«Ակտիվություն»**	տխուր-ուրախ, ակտիվ-պասիվ, ստատիկ-դինամիկ, թուլացած-լարված, դանդաղ-արագ, կենսուրախ-մելամաղձոտ,
2.	**«ՈՒԺ»**	ծանր-թեթև, թույլ-ուժեղ, մեծ-փոքր, վախկոտ-քաջ, խելացի-հիմար, փափուկ-պինդ
3.	**«Գնահատական»**	լավ-վատ, տգեղ-գեղեցիկ, հաճելի-տհաճ, օտար-հարազատ, բարի-չար, կեղտոտ-մաքուր

Ստացված տվյալներն յուրաքանչյուր կոնցեպտի համար վերլուծվել են ըստ գործոնների և ստացվել են թվային արտահայտությամբ արդյունքներ յուրաքանչյուր հետազոտվողի ամեն մի կոնցեպտի վերաբերյալ: Այլ կերպ ասած ստացվել է յուրաքանչյուր կոնցեպտի դիրքը սեմանտիկ եռաչափ (չափումները՝ «ակտիվություն», «ուժ» և «գնահատական») տարածության մեջ (աղյուսակ 3):

Այնուհետև համեմատվել են ամեն մի խմբի անդամների կոնցեպտների հեռավորությունն իրարից: Որից հետո հաշվարկվել է անհրաժեշտ կոնցեպտների միջև եղած հեռավորությունը սեմանտիկ տարածության մեջ՝ համաձայն ստացված արդյունքների (աղյուսակ 3):

Կոնցեպտների միջև եղած հեռավորությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$D_{AB} = \sqrt{\sum d^2_{AB}}$$

Որտեղ D_{AB}-ն A և B կոնցեպտների միջև եղած հեռավորությունն է, d_{AB}-ն A և B կոնցեպտների ցուցանիշների հանրահաշվական տարբերությունը: Տեղադրելով համապատասխան արժեքները (աղյուսակ 2) ստանում ենք հետևյալ արդյունքը՝

$$D_{AB} = \sqrt{[(-0,66)-(-0,66)]^2+[(-1)-(0)]^2+[(-0,33)-(1)]^2} \approx 1,66$$

Այսինքն, համաձայն աղյուսակ 1-ում բերված տվյալների, կոնկրետ հետազոտվողի սեմանտիկ տարածության մեջ «պատասխանատվություն» և «ընկերասիրություն» կոնցեպտների հեռավորությունը կազմում է մոտավորապես 1,66:

Ստացված արդյունքները

Նախ և առաջ հաշվարկվել են բոլոր հետազոտվողների ցուցանիշներն ըստ Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների: Այնուհետև դուրս են բերվել «էքստրավերսիա-ինտրավերսիա», «նեյրոտիցիզմ» և «փսիխոտիզմ» սանդղակների ցուցանիշներն ըստ Այզենկի անձնային հարցարանի: Հաշվարկվել են նաև ԲՍԳՀ արդյունքները: Որից հետո դուրս են բերվել բոլոր վեց ենթախմբերի արդյունքներն ըստ ԻՏՎՏ-ի, մասնավորապես հաշվարկվել է յուրաքանչյուր հետազոտվողի բոլոր գնահատված կոնցեպտների դիրքը եռաչափ սեմանտիկ տարածության մեջ: Այնուհետև, հաշվարկվել են միևնույն կոնցեպտների հեռավորությունները ենթախմբի անդամների միջև:

Ստացված արդյունքների համեմատության համար աղյուսակ 4-ում կարելի է գտնել նաև բոլոր կոնցեպտների միջինացված ներխմբային հեռավորությունները բոլոր ենթախմբերի համար: Իսկ աղյուսակ 5-ը ստացված բոլոր հետազոտական տվյալների վերլուծության և համադրության արդյունքն է. այնտեղ ներկայացված են ներխմբային համատեղելիության ցուցանիշները: Աղյուսակ 5-ում բերված «կոնցեպտուալ համատեղելիության մակարդակը» և «բավարարվածության մակարդակը (միջինացված տվյալներ)» սյունակների համեմատական արտահայտմամբ ցուցանիշները

Աղյուսակ 3
Կոնցեպտների դիրքը սեմանտիկ եռաչափ տարածության մեջ

	Կոնցեպտը	«ակտիվություն»	«ուժ»	«գնահատական»
A	«Պատասխանատվություն»	-0,66	-1,00	-0,33
B	«Ընկերասիրություն»	-0,66	0,00	-1,00

Աղյուսակ 4
Բոլոր կոնցեպտների միջինացված հեռավորությունները խմբի անդամների միջև

Ենթախումբը	Խմբային ամենափոքր ցուցանիշը	Խմբային ամենամեծ ցուցանիշը	Խմբային միջինացված ցուցանիշը
A	0,757	1,623	1,190
B	1,146	1,675	1,441
C	1,117	1,117	1,117
D	0,629	1,233	1,019
E	1,073	1,727	1,417
F	1,234	2,936	1,900

Աղյուսակ 5
Ներխմբային համատեղելիության ցուցանիշները

Ենթախումբը	Ինտելեկտուալ համատեղելիության մակարդակը - RPM	Անձնային համատեղելիության մակարդակը - EPQ	Կոնցեպտուալ համատեղելիության մակարդակը – ԻՏՎՏ		Բավարարվածության մակարդակը (միջինացված տվյալներ) – ԲՍԳՀ	
			Համեմատական արտահայտմամբ	Թվային արտահայտմամբ (համատեղելիության մակարդակը մեծ է այնքանով, որքանով թիվը մոտ է 1-ին)	Համեմատական արտահայտմամբ	Թվային արտահայտմամբ (1-10 բալային համակարգով, որտեղ 1-ը նվազագույն արժեքն է, իսկ 10-ը՝ գերագույն)
A	50%	63%	միջին	1,190	շատ ցածր	8,91
B	100%	100%	ցածր	1,441	ցածր	9,00
C	50%	66%	բարձր	1,117	միջին	9,66
D	66%	56%	շատ բարձր	1,019	շատ բարձր	9,88
E	100%	56%	միջին	1,417	միջին	9,44
F	75%	50 %	շատ ցածր	1,900	բարձր	9,83

ստացվել են այդ նույն սյունակներում նշված թվային արտահայտմամբ ցուցանիշների բաժանմամբ՝ 5 մակարդակների: Վերջինս էլ իրագործվել է հիմնվելով նշված սյունակներում բերված թվային արտահայտմամբ ցուցանիշների նվազագույն և գերագույն արժեքների միջև եղած հեռավորության վրա հետևյալ կերպ.

$$\Delta\alpha=(max-min)/5$$

min = 8,91

max = 9,88

$$\Delta\alpha = (9,88- 8,91) / 5 = 0,194$$

որտեղ Δα նվազագույն և գերագույն արժեքների միջև միջակայքի 1/5-ն է և որի թվային արժեքն է 0,194:

Հետևաբար՝

α_1=[min; min+Δα)

α_2=[min+Δα; min+2Δα)

α_3=[min+2Δα; min+3Δα)

α_4=[min+3Δα; min+4Δα)

α_5=[min+4Δα; max]

որտեղ՝

α_1 -ը «շատ ցածրն է»

α_2 -ը «ցածրն է»

α_3 -ը «միջինն է»

α_4 -ը «բարձրն է»

α_5 -ը «շատ բարձրն է»

Նույն մաթեմատիկական տրամաբանությամբ հաշվարկվել է նաև «կոնցեպտուալ համատեղելիության մակարդակը» սյունակի համեմատական արտահայտմամբ արժեքները, բացառությամբ այն բանի, որ այստեղ max համարվում է թվային նվազագույն արժեքը, իսկ min համարվում է թվային գերագույն արժեքը, այսինքն հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝

$$\Delta\alpha=(max-min)/5$$

min = 1,900

max = 1,019

α_1=[min; min-Δα)

α_2=[min-Δα; min-2Δα)

α_3=[min-2Δα; min-3Δα)

α_4=[min-3Δα; min-4Δα)

α_5=[min-4Δα; max]

որտեղ՝

α_1 -ը «շատ ցածրն է»

α_2 -ը «ցածրն է»

α_3 -ը «միջինն է»

α_4 -ը «բարձրն է»

α_5 -ը «շատ բարձրն է»

Արդյունքների քննարկում

Այսպիսով, հետազոտության արդյունքում ստացված տվյալները մեծամասամբ ապացուցում են նախնական հիպոթեզը: Այդ է վկայում մասնավորապես այն, որ օրինակ բավարարվածության «շատ բարձր» մակարդակ արձանագրված D ենթախմբում գրանցվել է նաև կոնցեպտուալ

համատեղելիության «շատ բարձր» մակարդակ, և միևնույն ժամանակ չի գրանցվել ինտելեկտուալ և անձնային համատեղելիությունների նշանակալի բարձր մակարդակ (ընդամենը՝ 66 և 56% համապատասխանաբար): Այսինքն, բավարարվածության մակարդակի բարձր լինելը չի կարող պայմանավորված լինել ինտելեկտուալ և/կամ անձնային համատեղելիությունների մակարդակով:

Հատկանշական են նաև այն, որ B ենթախումբը, որում արձանագրվել է ինտելեկտուալ և անձնային համատեղելիությունների շատ բարձր մակարդակ (երկուսն էլ 100%), ցուցաբերել է բավարարվածության «ցածր» մակարդակը: B ենթախմբում ցածր է նաև կոնցեպտուալ համատեղելիության մակարդակը: Սա նույնպես խոսում է նախնական հիպոթեզի օգտին:

Բավարարվածության «միջին» մակարդակի հետ զուգակցվող կոնցեպտուալ համատեղելիության «միջին» մակարդակ բացահայտվել է E ենթախմբում, որը նույնպես խոսում է հեղինակի կողմից առաջադրված թեզի օգտին, քանի որ վերջիններս համարժեք են իրար, և միայն անձնային համատեղելիության ցուցանիշն է, որ կարող է քիչ թե շատ հարաբերվել ստացված ցուցանիշների հետ (56%):

E ենթախմբի տվյալներից քիչ են տարբերվում C ենթախմբի ցուցանիշները, որտեղ բավարարվածության «միջին» մակարդակի հետ զուգակցվում է կոնցեպտուալ համատեղելիության «բարձր» մակարդակը: Պետք է նշել, որ միջինին մոտ են նաև ինտելեկտուալ և անձնային համատեղելիությունների ցուցանիշները (50 և 66% համապատասխանաբար), որոնք թույլ չեն տալիս ամենայն համոզվածությամբ խոսել այս ենթախմբում բավարարվածության «միջին» մակարդակի՝ կոնցեպտուալ համատեղելիությամբ պայմանավորված լինելու մասին, սակայն չեն էլ կարող ընկալվել որպես հակաթեզ:

Այլ է պատկերը A ենթախմբում, որտեղ համատեղելիության բոլոր ձևաչափերով գրանցվել են միջին ցուցանիշներ և բավարարվածության «շատ ցածր» մակարդակ: Տվյալ պարագայում ստացված ցուցանիշները չեն վկայում համատեղելիության որևէ կոնկրետ սկզբունքի արդյունավետության կամ անարդյունավետության մասին:

Հետաքրքրական են F ենթախմբի տվյալները, որտեղ կոնցեպտուալ համատեղելիության «շատ ցածր» մակարդակի առկայության դեպքում գրանցվել է բավարարվածության «բարձր» մակարդակ: Ընդ որում վերջինս չի կարող պայմանավորված լինել ինտելեկտուալ և անձնային համատեղելիությունների ցուցանիշներով, քանի որ դրանք էական դրական կապ չեն դրսևորում (75 և 50% համապատասխանաբար):

Կոնցեպտուալ համատեղելիության հաշվարկման ժամանակ հուսալի տվյալներ ստանալու համար որքան շատ կոնցեպտներ գնահատման ներկայացվեն հետազոտվողներին, այդքան լավ, սակայն կոնցեպտների քանակի ավելացման հետ ավելանում են նաև վերլուծվող նյութի ծավալն ու դրա վրա ծախսվող ժամանակը: Սա թերևս կոնցեպտուալ համատեղելիության հաշվարկման միակ թույլ կողմն է:

Եզրակացություններ

Հիմնվելով ստացված արդյունքների վրա, արվել են հետևյալ եզրակացությունները.

- Խմբի անդամների կոնցեպտուալ համատեղելիության մակարդակի և համատեղ գործունեությունից խմբի անդամների բավարարվածության մակարդակի միջև գոյություն ունի դրական կապ/կորելյացիա: Այսինքն, կոնցեպտուալ համատեղելիության համեմատաբար բարձր մակարդակ ունեցող խմբերում համատեղ գործունեությունից բավարարվածության մակարդակը նույնպես բարձր է:
- Խմբի անդամների անձնային համատեղելիության մակարդակի և համատեղ գործունեությունից խմբի անդամների բավարարվածության մակարդակի միջև դրական կապ/կորելյացիա չի բացահայտվել:
- Խմբի անդամների ինտելեկտուալ համատեղելիության մակարդակի և համատեղ գործունեությունից խմբի անդամների բավարարվածության մակարդակի միջև դրական կապ/կորելյացիա չի բացահայտվել:
- Խմբեր կազմելիս անդամների տեղաբաշխումը կոնցեպտուալ համատեղելիության սկզբունքով իրականացնելն առավել արդյունավետ է, քան անձնային կամ ինտելեկտուալ համատեղելիության սկզբունքով տեղաբաշխումը:
- Միջանձնային հարաբերություններում ներգրավված սուբյեկտների բավարարվածության մակարդակը այդ իսկ գործընթացից, անմիջականորեն կախված է ընդհանուր կոնցեպտուալ տարածության առկայությունից: Այսինքն, վերջինիս առկայության դեպքում բավարարվածության մակարդակը առավել բարձր է լինում, քան դրա բացակայության դեպքում:
- Ընդհանուր կոնցեպտուալ տարածության առկայությունը ապահովում է միջանձնային

հարաբերությունների արդյունավետությունը: Ինչպես նաև նոր խմբեր կազմելիս կամ գոյություն ունեցող խմբերում նոր անդամներ տեղաբաշխելիս կոնցեպտուալ համատեղելիության սկզբունքի կիրառումը հնարավորություն կտա ապահովել համատեղ գործունեության արդյունավետությունը:

Գրականություն

1. Бегоян А.Н. Общее концептуальное пространство как предпосылка адекватной социальной перцепции и эффективной социальной коммуникации. Актуальные проблемы прикладной социальной психологии: сборник докладов. Материалы I международной научно-практической конференции 27-28 декабря 2011г. СПб.: Издательство Санкт-Петербургского университета управления и экономики; 2012. с. 207-209.
2. Бегоян А.Н. Подбор, оценка и расстановка персонала банка методом семантического дифференциала: принцип концептуальной совместимости. Материалы I Летней психологической школы: Сборник научных статей / Отв. ред. Е.Р. Агадуллина, А.В. Ловаков. М.: Эннеагон Пресс; 2011. с.13-21.
3. Гамезо М.В., Домашенко И.А. Атлас по психологии: Информ.-метод. пособие курсу Г18 «Психология человека». М.: Педагогическое общество России; 2004. с.276.
4. Eysenck H.J., Eysenck S.B. Manual of the Eysenck Personality Questionnaire. London: Hodder and Stoughton; 1975.
5. Osgood C., Suci G., Tannenbaum P. The measurement of meaning. Urbana, IL: University of Illinois Press. 1957.
6. Raven J., Raven J., Court J. Manual for Raven's Progressive Matrices and Vocabulary Scales. San Antonio, TX: Pearson Assessment. 2004.

Ստացվել է՝ 30.10.2013

Հավելված
Օսգուդի իմաստային տարբերակիչի հեղինակային վերափոխված տարբերակը (ԻՏՎՏ)

		+3	+2	+1	0	-1	-2	-3	
1	ծանր								թեթև
2	տխուր								ուրախ
3	թույլ								ուժեղ
4	լավ								վատ
5	մեծ								փոքր
6	տգեղ								գեղեցիկ
7	ակտիվ								պասիվ
8	հաճելի								տհաճ
9	ստատիկ								դինամիկ
10	վախկոտ								քաջ
11	խելացի								հիմար
12	թուլացած								լարված
13	օտար								հարազատ
14	փափուկ								պինդ
15	դանդաղ								արագ
16	բարի								չար
17	կենսուրախ								մելամաղձոտ
18	կեղտոտ								մաքուր

Բավարարվածության սուբյեկտիվ գնահատման հարցաթերթիկը (ԲՍԳՀ)

Ա.Ա.Հ. _____

Խնդրում ենք գնահատել 10 բալանոց համակարգով (վերցնել շրջանակի մեջ):

1. Բավարարվածությունը համատեղ աշխատանքի ընթացքից՝
   1 2 3 4 5 6 7 8 9 10
2. Բավարարվածությունը հարաբերություններից աշխատանքի ընթացքում՝
   1 2 3 4 5 6 7 8 9 10
3. Բավարարվածությունը աշխատանքի արդյունքներից՝
   1 2 3 4 5 6 7 8 9 10